

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ



«ՀԱՄԼԵՏԸ» ՌՈՒԹԵՆ ՄԱՄՈՒԼՅԱՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հաղորդում Բյուրակն Անդրեասյանի

Աշխարհահռչակ արվեստագետ Ռուբեն Մամուլյանը մինչև այժմ հայտնի է եղել իբրև մի շարք առաջնակարգ կինոնկարների և թատերական ներկայացումների բնագործ հեղինակ, Այժմ ահա նրա արվեստագիտական տաղանդը փայլատակել է մի այլ կողմից, Ռուբեն Մամուլյանը հասարակայնությանն է ներկայացրել շեքսպիրյան «Համլետի» իր խմբագրած տարբերակը¹։ Մանրակրկիտ ծանոթանալով Ռուբեն Մամուլյանի կատարած այս հսկայական աշխատանքին, ճիշտն ասած, դժվար է ասել՝ արվեստագետ րասաստե՞ղծն է այստեղ առաջին տեղում, թե՞ առաջնակարգ շեքսպիրագետը։

«Համլետը» Շեքսպիրի թերևս ամենազործությունն է, որը ամենից ավելի ժողովրդականն է, և՛լ ահա Ռուբեն Մամուլյանը Շեքսպիրի բոլոր ստեղծագործություններից իր խմբագրական աշխատանքի համար ընտրել է հենց «Համլետը»։

«Համլետի» մեջ Մամուլյանի կատարած բազմաթիվ փոփոխություններն ու կրթաբուսականները ամենից առաջ ցույց են տալիս, թե որքան խոր գիտի Մամուլյանը Շեքսպիրին, նրա ժամանակաշրջանը, նրա ողջ ստեղծագործությունը և մասնավորապես «Համլետը»։

Իսկ ի՞նչն է դրդել Մամուլյանին ձեռնամուխ լինելու մի այնպիսի աշխատանքի, որը, լինելով շատ ծանր, դժվարին, Շեքսպիրի ոչ քիչ ներկայագույների կողմից դիտվելու է իբրև սրբապղծության պես մի բան։ Այդ գործին ձեռնարկելու թերևս միակ պատճառն այն է, որ Մամուլյանը Շեքսպիրի, մասնավորապես նրա Համլետի մեծագույն սիրահարներից է։

Եվ իբրոք, մի՞թե անբնական չէ, որ Շեքսպիրի ստեղծագործությունները ամենից քիչ մատչելի, ամենից քիչ հասկանալի են բնագրի լեզվով՝ անգլերեն։ Այն ժամանակներից ի վեր, երբ Շեքսպիրը գրում էր իր սղերագույններն ու կատակերգությունները, երեք և կես դար է անցել, անգլերենը շարունակել է զարգանալ, փոփոխվել, իսկ շեքսպիրյան անգլերենը նրա պիեսների մեջ հասկանալի է, որ մնացել է անփոփոխ։ Եվ ահա այսօր անգլերեն խոսող ժողովուրդներին Շեքսպիրը ավելի քիչ մատչելի է, քան աշխարհի մյուս ժողովուրդներին, որոնք անգլիական դրամատուրգի ստեղծագործությունները կարդում կամ նրանց բնագրությունները դիտում են թարգմանաբար։

Շեքսպիրի գործերը թարգմանված են աշխարհի 79 լեզուներով։ Դրանց մեջ կան առաջնակարգ թարգմանություններ, զեղարվեստական խոսքի իսկական զուլգործոցներ։

¹ *Shakespeare's Hamlet, A New Verston* by Rouben Mamoulian, Indianapolis New York-Kansas City, 1965, 263 էջ։

Հայերը, ուսաները, դերմանացիները, ֆրանսիացիները, խառնացիները և շատ ուրիշ ազգեր երբանկաթյուն ունեն «Համլետը», ինչպես և Շեքսպիրի մյուս պիեսները կարգավ և դիտել մայրենի լեզվով: Մինչդեռ անգլիացին, ամերիկացին, ավստրալիացին նույն պիեսները կարգում են զանազան բառարանների ու լեզվական ծանոթագրությունների միջոցով: Ուշագրավ է նաև, որ, օրինակ, «Համլետի» անգլերեն հրատարակություններին կցվող մեկնական բառարանները հաճախ ավելի սուվար են լինում, քան ինքը՝ պիեսը: Ահա թե ինչու օտար լեզուներ իմացող անգլիացիները կամ ամերիկացիները դերագատում են Շեքսպիրը կարգավ իրենց մտաշելի սրել՝ ճտար լեզվով և ոչ բնագրով:

Մյուս կողմից «Համլետի» բնագիրը բաղմաթիվ գրականագետների, շեքսպիրագետների զցել է թյուրիմացութան մեջ լիզվի արխակի բնույթի և անհասկանալի լինելու պատճառով: Զանազան դատողություններ են արվել, տեսություններ զարգացվել սխալ հասկացված բառերի և նախադասությունների պատճառով: Է՛լ ավելի շատ թյուրիմացություններ են ծագել «Համլետի» բնագրությունների ժամանակ, Հին անգլիերենը չհասկացող ոչ բիշ պեծիսյորներ ու դերասաններ անգլոբրեն աղավաղել են շեքսպիրյան գլուխգործոցը:

Երկար տարիների բնթացրում այս հարցերը մտահոգել են Ռուրեն Մամուլյանին: Նա տեսել է, թե ինչպես մարդիկ հաճույր շին զգում «Համլետի» պես անգլոզական ստեղծագործությունը բնագրով կարգալիս կամ դիտելիս: Մամուլյանը, ինչպես ինքն է ասում, փտտահ է եղել, որ սրել մեկն իր վրա կառնի Շեքսպիրն իր հայրենակիցներին մտաշելի գարձնելու գործը: Սակայն, տեսնելով, որ այդ մտաին հոգացող չկա, Մամուլյանը որոշել է ինքը «հարություն տալ» անգլերեն Շեքսպիրին: Ինչպես ինքն է գրում, նա այդ բանը արել է պատասխանատվության ամենամեծ զգացումով:

«Շեքսպիրին փոփոխելը ահավոր գրադմունք է: Ինձ հուսադուրը այն համոզմունքն էր, որ ես կատարում եմ կարևոր և պետրական մի գործ, և որ այդ գործը արժանի հատուցում է մեծ վարպետին և ծառայում է նրան: Առանց Շեքսպիրի կյանքը չափազանց ախոր կլինի»:

Ուշագրավ է Մամուլյանի պատմած ճապոնական ավանդությունը. ճապոնական կայսրը ընկնում է մի փոսի մեջ, կտորում ոտքը: Մի գլուզացի, որ տեսնում է այդ հեշտությունը կարող էր փրկել իր կայսրին, որին ինքը անչափ պաշտում էր, բայց օրենքը զուղացուն արգելում է ձեռքով դիպչել կայսրին, որը համարվում էր սրբություն: Եվ գլուզացին նստում է փոսի եզրին ու նալում, թե ինչպես է ցավից զալարվում հուսահատված կայսրը:

Արդ տեսնենք, թե ինչ փոփոխություններ է կատարել Մամուլյանը «Համլետի» բնագրում:

Մոտ 2000 արխակի բառեր փոխարինվել են ժամանակակից անգլերենում գործածվող համարժեքներով: 100 տող զրել է ինքը՝ Ռ. Մամուլյանը:

Մի շարք բառերի ուղղագրությանը տրվել է ներկայումս անգլերենում ընդունված ձևը:

Ճշտվել է կետագրությունը:

Համլետը 5 գործողությունից վեր է ածվել 4-ի:

Նշվել են գործողությունների և տեսարանների միջև ընկած ժամանակամիջոցները: Փոխվել է «Համլետի» տարիքը. 30 տարեկանից նա դարձել է 20 տարեկան:

Ճշտվել է մյուս կերպարների տարիքը:

Մեկուսի ասվող որոշ խոսքեր վեր են ածվել երկախոսության:

Պիեսից հանվել են հերոսների ավանդական դարձած մի շարք գործողություններ: Պիեսի համար գրվել են մի շարք նոր բեմական ցուցումներ:

«Ես չեմ առաջնորդվել անմիտ ինքնավստահությամբ,— առում է իր առաջարանում Ռ. Մամուլյանը,— այլ «Համլետի» և նրա հեղինակի նկատմամբ ունեցած ամենաջերմ հիացմունքն է ինձ ստիպել այդ անել»: Առաջարանում նա մի առ մը Հիմնավորում է իր կատարած բոլոր փոփոխությունները և նշում այն դժվարությունները, որոնց հանդիպել է շեքսպիրյան բնագիրը արդիականացնելիս:

Նա աշխատել է այնպիսի զգուշությամբ, որ կատարված փոփոխությունները որևէ կերպ չխաթարեն Շեքսպիրի ստեղծագործության ուժն ու հմայքը: Օրինակ, հին բառերը նորերով փոխարինելիս, Մամուլյանը մեծ ջանք է թափել շեքսպիրյան ոտանավորի շափն ու ոգին պահպանելու համար: Եվ յամբական շափը լիովին պահպանված է: Երբեմն շեքսպիրյան խոսքի երաժշտականությունը պահպանելու համար Մամուլյանը թողել է արխայիկ ձևը: Օրինակ, այդպես նա որոշ հատվածներում թողել է *ի՛նՕՍ* դերանունը (դու), որը ժամանակակից անգլերենում չի գործածվում:

Ահա մի հատված.

Ghost

I could a tale unfold whose lightest word
Would harrow up thy soul, freeze thy young blood
Make thy two eyes, like stars, start from their spheres...

(I, 5)

Մի հատված ևս.

Hamlet

...Remember thee

Ay, thou poor ghost, while memory holds a seat
In this distracted globe. Remember thee?

(I, 5)

Շատ ավելի զգույշ է վարվել Մամուլյանը կրճատումներ կատարելիս: Ինչպես հայտնի է, «Համլետը» բեմադրության համար փոքր-ինչ «երկար» պիես է և սովորաբար բեմադրվում է կրճատումներով: Շատ բեմադրողներ ճիշտ չհասկանալով բնագրի լեզուն, ուստի և ոգին, սովորություն են դարձրել կրճատելու հատվածներ, որոնք երբեմն շատ կենսական են: Մամուլյանը ամեն ջանք գործադրել է կարևոր հատվածներից ոչ մեկին ձեռք չտալու համար. «...յուրաքանչյուր կրճատում բնագրից արված է միայն երկարատև և տքնաշան պրպտումներից հետո. խիղճս միշտ արթուն կանգնած է եղել իմ գլխավերևում»,— գրում է նա: Կրճատումների մեջ են մտել նաև այն մասերը, որոնք, Մամուլյանի կարծիքով, հետագա հավելումներ են: Մի շարք դեպքերում էլ նա կրճատել է պիեսի այն հատվածները, որոնք Շեքսպիրը գրել է իր ժամանակի թատերական բեմի առանձնահատկություններից ելնելով: Օրինակ, հայտնի է, որ եղիսարեթյան շքր-ջանի բեմը վարագույր չի ունեցել, ինչպես և կողքի թևեր: Դա է դրգել Շեքսպիրին «Համլետի» վերջում ավելացնել այն հատվածը, երբ Ֆորտինբրասը հրամայում է սպանված մարմինները դուրս տանել.

Նկեր դուրս տարեր այլ մարմինները:
Այս տեսարանը դառաին է հարմար:
Խիստ ժանտառանիւլ այս տեղի համար:

Վարագույր լինելու դեպքում կարող էր նրա փակվելով պիտան ավարտվել:

Կամ, օրինակ, Մամուլյանի կարծիքով, ինչ-որ դերասանի կողմից կատարված հետապա ալվելացում է այն բնական ցուցումը, երբ Համլետն էլ Հանրտի հետից ցատկում է Օֆելիայի գերեզմանի մեջ:

Ուշագրավ են Մամուլյանի մտորումները Համլետի տարիքի վերաբերյալ: Ինչպես հայտնի է, պիեսում երկու տեղ ակնարկ կա այն մասին, որ Համլետը 30 տարեկան է, Առաջինը ներկայացման տեսարանում (գործողություն III, տեսարան II), երբ բեմի թաղավորը ասում է.

Նրեսուն անգամ Ֆերուսի կտորը արել է շրջան
Տելլուսի շուրջը և Պոսիդոնի աղի պետություն,
Նրեսուն անգամ տասներկու լուսին պտույտ են գործել
Տասներկու անգամ երեսուն դիշեր երկրի շուրջ գործել:

Սա ակնարկ է Համլետի տարիքի մասին: Այդպիսի ակնարկ կա նաև դերեզմանատան տեսարանում:

Այդ երկու տեսարանում էլ երեսուն բառը դարձված է բան:

Մամուլյանը բաղձաթիվ օրինակներով կարողանում է ապացուցել, որ պիեսի ընդհանուր ուղին և մանավանդ Համլետի կերպարը այնպիսիք են, որ Դանեմարքի արքայազնը պետք է որ լիներ շատ ավելի երիտասարդ՝ 19—20 տարեկան: Շեքսպիրը այդպես էլ պատկերում է նրան: Դրամատուրգը, ըստ երևույթին, իր հերոսին երեսուն տարեկան է դարձրել պիեսը գրելուց մի քանի տարի հետո, քանի որ, ինչպես նշում է Մամուլյանը, Համլետը շեքսպիրյան պիեսի վաղ տարբերակում (Քվարտո—1) մոտավորապես տասնինը տարեկան է:

Առաջին անգամ այս Համլետը խաղացել է Անդլիայի հռչակավոր դերասան և Շեքսպիրի մտերիմ բարեկամ Ռիչարդ Բրբրեյջը, որն այդ ժամանակ մոտավորապես երեսուն տարեկան էր: Լինելով մեծ դերասան, նա անկասկած կարողացել էր շատ ավելի երիտասարդ երեւել բեմում: Երբ Շեքսպիրը այս առաջին տարբերակը վերածախկեց և դարձրեց ներկայիս «Համլետի» նման հանճարեղ մի դործ. նա հավանաբար շատ էր ուղում, որ կրկին Բրբրեյջը հանդես գար գլխավոր դերում: Բանն այն է, որ Բրբրեյջը այդ ժամանակ երեսունչորս տարեկան էր: Եվ հասկանալի է, որ այնքան էլ հարմար չէր լինի քսան տարեկան երիտասարդի դերում նրա հանդես գալը: Ըստ երևույթին Բրբրեյջը հրաժարվել էր իր տարիքին չհամապատասխանող դերում հանդես գալ (Մամուլյանն առհասարակ անհանդուրժելի է համարում Համլետի դերում մեծահասակ դերասանների հանդես գալը): Շեքսպիրը շատ է ցանկացել, որպեսզի Համլետի դերը հատկապես Բրբրեյջը կատարի, ստիպված պիեսի մեջ ավելացրել է մի երկու ակնարկ Համլետի երեսուն տարեկան լինելու վերաբերյալ: Մամուլյանը, իր խորին համոզմամբ, Համլետին քսան տարեկան դարձնելով, վերականգնում է շեքսպիրյան ստեղծագործության նախնական վիճակը:

Համոզիչ բացատրություն է տալիս Մամուլյանը նաև «Համլետը» 5 գործողություններից 4-ի վերածնելու վերաբերյալ, Պիեսի 1604 թ. (Քվարտո—2) հրատարակության:

մեջ գործողությունների և տեսարանների բաժանում չի եղել: Առաջին ֆոլիոյում նշված է միայն «Առաջին գործողություն», «Տեսարան 1-ին», «Տեսարան 2-րդ», «Տեսարան 3-րդ», «Երկրորդ գործողություն», «Տեսարան 2-րդ»: Առաջին անգամ 1709 թվականին «Համլետը» հինգ գործողության է բաժանել և համապատասխան տեսարաններ նշանակել խմբագիր-հրատարակիչ Նիկողոս Ռոսվելը: Այնուհետև անհասկանալի պատճառներով «Համլետի» բնագրի նման բաժանումը դարձավ ավանդական: Մամուլյանի կատարած մանրագիծն ուսումնասիրությունները նրան հանդիսացել են այն կերակացության, որ ամենից ավելի ճիշտ է «Համլետը» ներկայացնել 4 գործողությամբ:

Հետաքրքրական է նշել նաև, որ «Համլետի» բնագրի տեքստերում (Քվարտո—2 և ֆոլիո—1) բոլորովին բացակայել են բնական ցուցումները: Ավելի ճիշտ, նշված են եղել 2 կամ 3 մուտք, ինչպես և հատուկենտ նշումներ երաժշտության վերաբերյալ: Եղած այդ փոքրթիվ ցուցումներն էլ ըստ Մամուլյանի Շեքսպիրինը շին: Մեզ ծանոթ ցուցումները հետագայում գրել են հրատարակիչները, բնագրողները կամ դերասանները: Այստեղ էլ Մամուլյանը միանգամայն տրամաբանորեն հիմնավորում է իր առաջարկած բնական ցուցումները: Դրանք զրված են հնարավորին շափ սեղմ, ամփոփ՝ տեքստը շժանրարեռնելու և շեքսպիրյան խոսքի երաժշտականությունը պահպանելու պայմանով:

Ծանոթանալով «Համլետի» Ռուբեն Մամուլյանի կողմից խմբագրված տարբերակին, դժվար չէ նկատել, որ այն ոչ միայն մատչելի է դարձել անգլերեն կարդացող ընթերցողի համար, այլև միանգամայն հարմարեցվել է ժամանակակից թատրոնի բնմին: Ռ. Մամուլյանը պատրաստվում է առաջիկայում բեմ հանել «Համլետի» այս նոր տարբերակը: Անշուշտ կարևոր է, թե ինչպիսի ընդունելություն կունենա այն:

Ե՛րբ Ռաֆայելի Մադոնան կամ Միքելանջելոյի Միքստինյան ֆրեսկոները դարբերի փողոց և էրոզիայից մթազնվում են, դրանք զգուշորեն և սիրով վերականգնվում են՝ իրենց իրական միտք և փառահեղ գույները բոլորից ցույց տալու համար: Այսպեսով, իմ նպատակն է եղել ազատել Համլետը բառական արխաիկ կուտակումներից, այնպես, որ յուրաքանչյուր ընթերցող կարողանա վերահայտնադործել շեքսպիրյան թաքնված հրաշալիքները և ավելի առատորեն վայելել «նրա մեծ խոսքի հպարտ ճախրումը»:

Երկու տարի է անցել նոր «Համլետի» հրատարակությունից և արդեն հայտնվել են մի շարք կարծիքներ նրա վերաբերյալ: Այդ կարծիքները տարբեր են, հաճախ իրարամերժ: Նրանց մասին որոշ պատկերացում տալու համար բերում ենք ժամանակակից երկու նշանավոր շեքսպիրագետների՝ Քոմաս Լասկի և Ալ. Ռոուզի տեսակետները, որոնք տպագրված են Նյու-Յորքում լույս տեսնող «Արարատ» հանդեսի 1966 թ. ամսավա համարում, ըստ որում Ռուուզի հոդվածը նախապես լույս է տեսել «Ուոլ Ստրիտ Զոուտնելի» ապրիլի 21-ի համարում:

Քոմաս Լասկը իր «Ճանաչողության ոչ հեշտ ուղի» հոդվածում գրում է, որ Մամուլյանի բողոքները ճիշտ են և նրա նպատակը պինդ մատչելի դարձնելու վերաբերյալ՝ աղնիլ, սակայն արդյունքն ստացվել է «Համլետի» մի տարօրինակ և ցավալի աղճատում: Դա մի քմահաճ խմբագրություն է այնպիսի փոփոխություններով, որոնք Շեքսպիրի ընթերցողին նոր, շատ ավելի բարդ պրոլեմների առաջ են կանգնեցնում:

Մամուլյանը համարձակորեն տեղ-տեղ փոխել է «Համլետի» շափը և ավելի այն փշացրել, բավական ջանակով՝ կրճատումներ է արել շեքսպիրյան բնագրում: Լասկի կարծիքով Մամուլյանը չի ընկալում Շեքսպիրի լեզվի հարստությունները, այն-

տեղ կզած բառախաղերը և փոխարեութիւնները, Հոգվածում բերվում են օրինակներ, որոնց միջոցով հեղինակը ուզում է ցույց տալ Մամուլյանի կատարած սխալները շերտադրյալն րեազիրը խմբագրելիս: Ըստ Լասկի Մամուլյանը տեղ-տեղ խախտել է յամբական շարքը՝ դարձնելով այն անսպասւած, որի հետեանքով կորել է շերտադրյալն լիզլի կրածշտակահոթիւնները:

Լասկը գտնում է նաև, որ Մամուլյանի խմբագրութիւնն հետեանքով շատ տեղեր ամբողջովին փոխվել է շերտադրյալն խոտրի խմաստը: Իսկ Մամուլյանի կատարած կեր-ճատումները, Լասկի կարծիքով, անիմաստ են և զրկում են հերոսներին իրենց կերպարային հատկանիշներէջ:

Հոգվածի վերջում Լասկը գրում է, որ իրոք շատերը օգնութիւն կարիք ունեն Եերտադրը ուսումնասիրելիս, բայց, շարունակում է նա, «Համլետի» այս տարբերակը այդպիսի օգնութիւն չէ: «Համլետի» սուլորական հրատարակութիւններն իրենց ուղ օժանդակ ապարտաով (բառարաններ, ծանոթագրութիւններ և այլն) շերտադրյալն աղ երկի ընթերցանութիւնը դարձնում են հոգատար և սենտուն, մինչդեռ Մամուլյանի տարբերակը ընթերցողից նման հոգատարութիւն և ուշադրութիւն չի պահանջում: Հակառակ Լասկի այս մերժողական կարծիքի, հայտնի շերտադրագետ Ա. Լ. Ռոուզը իր «Նշանակալից հաջողութիւն» հոգվածում շատ բարձր գնահատական է տալիս Մամուլյանի խմբագրութիւնը հրատարակված «Համլետի» տարբերակին:

Մեծ վիճարանութիւններ ծագեցին, կըր վերջերս Անգլիայի ազգային թատրոնը Ռուրերտ Գրեյվիին հանձնարարեց արդիականացնել շերտադրյալն պիետների հնացած և անհասկանալի դարձած նախադասութիւնները: ՔՐվում է, թև ամեն բան, ինչ վերաբերում է Եերտադրի երկերը փոփոխելուն, առաջացնում է վիճարանութիւն»,— գրում է Ռոուզը: Եվ այդ գտնում, որ Մամուլյանը ճիշտ է արել ձեռնարկելով «Համլետի» արդիականացմանը, նա գտնում է, որ Ռուրին Մամուլյանը կրկնակի ուժով է զգացել Եերտադրի արդիականացման կարևորութիւնը: Ռոուզը գրում է, որ Մամուլյանը այդ բանն զգացել է «իբ՝ թատերական բեմագրողի բնազդով ու երևակայութիւնը, իր սեփական հանձնարի փայլով սրպես ոեծիսյոր և պրոդյուսեր»:

Ռոուզի կարծիքով Մամուլյանը ցուցաբերել է դրամատիկ այնպիսի թափանցողականութիւն, որպիսին, նրա խոտրերով ասած «մենք՝ ակադեմիկոսներս հույս չունենք ունենալու: Ես նախանձում եմ նրան,— գրում է Ռոուզը,— բայց հուսով եմ, որ ունեմ բովական երևակայութիւն՝ ընկալելու համար այն հաջողութիւնը, որ Մամուլյանին բերեց Եերտադրի «Համլետը»:

Այնուհետև Ռոուզը թվարկում է «Համլետի» նոր տարբերակի արժանիքները. ըստ նշանավոր շերտադրագետի, Մամուլյանը «Համլետի» բնագիրը զլատել է ավելի քան 400 տարվա հնութիւն ունեցող փոշոց և այդ բանը նա արել է մեծ զգուշութիւնը, զգացողութիւնը և Եերտադրի նկատմամբ իսկական ակնածանքով: Նա այնպես է փայլեցրել պիետը, որ վերջինս պայծառացել է, բյուրեղացել և ստացել դրամատիկական առավելագոյն էֆեկտ: Փաստորեն դա հայտնութիւն է,— գրում է Ռոուզը,— ես կարող եմ ասել, որ իսկապես ցնցվել եմ կարգալով այն: Կարելի է երևակայել, թե պիետը որքան ավելի տպավորիչ կլինի ներկայացման ժամանակ: Իմ կարծիքով սա մի տարբերակ է, որ բնութիւն կրունի արդիական բեմում»:

Ռոուզը համաձայնում է Մամուլյանի առաջ քաշած բոլոր փաստարկներին հետ՝ որ անպերեն խոտող ժողովուրդները ներկայումս իսկապես որ շեն հասկանում Եերտադրին

և որ իրոք պետք է հնացած, անհասկանալի բաները փոխարինել ժամանակակից համարժեք բառերով, արդիականացնել արտասանությունը, ճշտել կետագրությունը, Ռոուզը գտնում է, որ պետք է շնորհակալ լինել Մամուլյանից բնագիրը ճաշակով կրճատելու համար, քանի որ այն շափազանց երկար է ներկայացման համար և միշտ էլ կրճատվել է բնագրվելիս, միայն ավելի կոպիտ և անզգույշ:

Համլետի տարիքի վերաբերյալ Մամուլյանի կարծիքը նույնպես Ռոուզը համարում է միանգամայն ճիշտ, այդ բանը հաստատելու համար Ռոուզը բերում է մի պատմաբանի փաստարկը: Ի դեպ այս առիթով նա հետաքրքրական փաստարկներ է բերում նաև Շեքսպիրի տարիքի և սոնետների գրման տարեթվի վերաբերյալ:

Իր հոդվածը նշանավոր շեքսպիրագետն ավարտում է հետևյալ խոսքերով. «Պարոն Մամուլյանը կարող է վստահ լինել, որ մեծ թվով աղյուսներ կստանա այն մարդկանցից, որոնք բավական հիմար են, որպեսզի կարողանան հասկանալ, թե ինքը ինչ գործ է կատարել մեզ համար: Բայց ես հուսով եմ, որ նա կարճամարտի նրանց անհասկացողությունն ու բիժամտությունը և առաջ կտանի Շեքսպիրին իսկպես ծառայություն մատուցելու իր ծրագիրը՝ հաղթահարելով այն խոշորոտները, որոնք կան Շեքսպիրի և ժամանակակից հանդիսատեսի միջև: Եթե պարոն Մամուլյանը «Համլետի» օրինակով շարունակի մեզ մատուցել շեքսպիրյան այլ պիեսների նույնքան բավարար տարբերակներ՝ իր զգայուն և ճարտար խմբագրություններով, որ շատ քիչ մարդիկ են ի վիճակի կատարելու, դա կլինի մեր ժամանակներում Շեքսպիրին մատուցված իրոք որ մեծադույն ծառայությունը»:

ՍՈՒՐԵՆՅԱՆՑԸ ՇԵՔՍՊԻՐԻ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆԻՉ

Հաղորդում Բյուրակն Անդրեասյանի

«Վինձորի զվարճասեր կանայք» կատակերգությունը Շեքսպիրի լավագույն ստեղծագործություններից է, բայց և այնպես դա չի մտել շեքսպիրյան այն գործերի շարքը, որոնք զարգարել են հայոց թատրոնի բեմը, դարձել նրան հարազատ:

Այդ կատակերգությունը, որքան մեզ հայտնի է, մի անգամ է ներկայացվել հայ բեմում՝ 1939 թվականին Գ. Սունդուկյանի անվան թատրոնում, Տիգրան Հախումյանի՝ ուսուցիչից կատարած թարգմանությունը:

Այդ թարգմանությունը չի տպագրվել: Առաջին անգամ «Վինձորի զվարճասեր կանայք» կատակերգությունը հայերեն լույս է տեսել 1953 թվականին Շեքսպիրի «Ընտիր երկերի» հայերեն եռահատոր հրատարակության II հատորում: Դա բնագրից հաշիկ Դաշտենցի կատարած թարգմանությունն է:

Սակայն Տ. Հախումյանի թարգմանությունը առաջինը չէ և ոչ էլ Դաշտենցիներ՝ առաջին թարգմանությունը բնագրից: Կատակերգության անդրանիկ թարգմանությունը բնագրից կատարել է Վարդգես Սուրենյանցը:

Այս թարգմանության գոյությունը մասին գրականության մեջ նշվել է հետևյալը. «Տեղեկությունների համաձայն, — գրում է Վ. Քերզրաշյանը, — Վ. Սուրենյանը թարգմանել է «Արքա կիր» և «Վինձորի ուրախ կանայքը», վերջինիս մասին մենք իմանում ենք Սևումյանի մի նամակից ուղղված Հովհ. Թումանյանին: Այդ նամակում Սևումյանը